# Վարդան Հակոբյան

## Լռության ծիրանի

### ՏԽՈՒՐ Է, ԵՐԲ ՏԽՈՒՐ Է

Տխուր է, երբ մարդիկ այլեւս սիրել չգիտեն,
եւ ավելի տխուր է, երբ ոմանց
թվում է, այնուամենայնիվ, թե սիրում են։

Ծաղիկը մեր ձեռքում պահում ենք այնքան,
որ մեռնում-հանգչում է, ու չենք էլ զգում՝
արդեն սիրո խոսքեր ենք շշնջում մահվանը։

Գեղեցիկ չէ, երբ ամեն ինչ «գեղեցիկ» է՝ ոնց որ
դեմոկրատիայի պարտադրած վերմակ՝
կամ ոտքերդ են դուրս մնում, կամ՝ գլուխդ։

Բառը պատերազմելու ձեւ է՝ եթե անգամ սեր ես
խոստովանում. եւ դաժան է ու կենսաբեր՝ որպես
կնոջ ճիչը, որ լսելի է ծննդատան պատուհանի տակ։

Աչքերիս մեջ թռչուններ եմ բազմացնում եւ արձակում
աշխարհով մեկ, ես եւս կուզենայի գոնե մեկ անգամ
բաց աչքերով տեսնել փակ աչքերով տեսածս։

Տխուր է, երբ մարդիկ ոչինչ չեն հասկանում,
եւ ավելի տխուր է, երբ ոմանց
թվում է, այնուամենայնիվ, թե ինչ-որ բան հասկանում են։

### ՄՂՁԱՎԱՆՋ

Տանիքների վրա՝ անանցանելի
ջունգլիներում անտենաների,
նոյեմբերյան լուսինը մի կերպ շտկում է ընթացքը,
իսկ ես ծառուղում կանգնել
եւ անանուն կարոտից ոռնում եմ լուսնի դեմքին,
այնպես, որ գազանանոցի արդեն տանու դարձած գայլը
սկսում է նախանձել իմ ազատությանն ու,
մանավանդ՝ ձայնին։

Ցուրտ է։ Գնում-հասնում եմ Վերածննդի փողոց, թիվ 1 շենք,
բացում եմ իմ աշխատասենյակի դուռը՝ ԼՂՀ ԳՄ-ում,
եւ քանի որ
ձյուն է ու ձմեռ, համակարգչի էկրանի վրա մարգեր եմ
պատրաստում, հարդարում,
աճեցնում վարդեր,
արբենում նրանց բույրով։ Ու ծաղկանց նեկտարը՝
ծորալով թղթերիս վրա,
դառնում է թախիծ։ «Մինակ ըմ»։ Զանգում եմ Երեւան՝
Երվանդ Պետրոսյանին։ Ասում եմ՝ գրական կյանքը ո՞նց է։ Ասում է՝ Հրանտ
Մաթեւոսյան եմ կարդում,
էլի՛։ Ու լռում է։ Իսկ իմ
սեղանին «Ազատ Արցախ»-ի բացված էջն է՝
«Միջազգային նորություններ»,
ուր մի ազերու հարցազրույցն է Սեզար
փաշայի հետ՝ «Ղարաբաղյան
պրոբլեմի շուրջ»։ Իմ էկրանի վրա,
ձյուների մեջ հրավառություն են բացել
նարցիսներն ու ոչ նարցիսները,
քրիզանթեմներն ու ոչ քրիզանթեմները,
շուշաններն ու ոչ շուշանները։ Եվ
ես՝ հայացքս սուզած նրանց թերթերում,

թախանձագին աղերսում եմ՝
ծաղիկներ, համայն աշխարհի,
շռայլորեն բացվեցեք ամենուրեք, երգերում,
քարերում, երկնքում,
անգամ այնտեղ, ուր հնարավոր չէ երբեք բուսնել,
տիեզերքը լցրեք սիրով՝ անեզրական ու անսահման,
ինձնից բացի՝ թող չլինի ուրիշ ոչ մի չսիրված մարդ,
թող այլեւս ոչ մի չսիրված «չպահանջվի ինձնից բացի»։

Ահա եւ գրադարակում իմ առաջին գիրքն է՝ «Մեղեդիներ»,
ե՞րբ էր, այն նվիրեցի քեզ,
«Ոտքից գլուխ մանուշակոտ աղջկան» գրելու
փոխարեն, ընծայականում խզբզեցի
ինչ-որ հիմարություններ,
երեւի նրա համար (դեռ սերս չէի խոստովանել), որ
օտար աչքերը հանկարծ տեսարաններ չսարքեն, թեպետ,
դրա համար, ցավոք, լուրջ հիմքեր դեռեւս չկային…

Մտքով պատանեկությանս աղջկան համբուրում եմ,
թեթեւ, իհարկե՝ այնպես, որ վարդի թերթերը չընկնեն,
ապա դուռը փակում եմ ու Չարենցին, որ
ինձ նայում է պատի նկարից՝
ծխախոտն ատամների արանքում
զայրագին սեղմած, ասում եմ՝ ես գնացի… Հասնում եմ
քաղաքի ծայրամասը, կանգնում եմ ձյունախաշամով
լցված առվի եզրին,
սպասում, ինչպես տարիներ առաջ, թե երբ իմ սիրած աղջկա
շուրթերի կարմիրը՝
հասած խնձորի պես,
ինքն իրեն կընկնի առվի մեջ,
որ ջուրը բերի, հասցնի ինձ։ Բայց բուք է։ Եվ առուն՝ սառած։

Բաբելոնյան աշտարակից թռած մի քա՞ր, թե՝ ասուպ էր,
մարեց, հանգավ երկնի ծերին։ Ու ես հանկարծ հիշեցի, որ
փողոցում եմ, գիշերվա 3-ն անց է, եւ
շուրջս հավաքվել փողոցի շներն ու ինձ նայում են
պլզած աչքերով։ Տուն եմ վազում, մտնում անկողին, ննջում
մի երազով, ուր
իմ սերը դառնում է երեք կես (բոլորը՝ դու),
մեկը գալիս, պառկում է աջ, մյուսը՝
ձախ կողքիս կպած, իսկ
երրորդն ուղղակի ձգվում է ինձ վրա
(նոր-նոր զգում եմ, որ իմ հասակը նրանից մի քիչ
բարձր է՝ 7-ից 10 սմ),
արցախյան «հարաբերական պատերազմ
եւ հարաբերական
խաղաղության» մթնոլորտում քնում եմ
հարաբերական քնով, երեւի
քո լուսնային մերկությունն ինձ
պաշտպանում է մղձավանջներից։

Առավոտյան լույսը չբացված, արթնանում եմ, դու
կողքիս ես, նայում եմ, լրիվ ես՝ ամբողջական,
թեքվում դեպի ինձ, ասում ես՝ երազում խոսում էիր,
ո՞ւմ հետ էիր,
ասում եմ՝ քեզ հետ, ասում ես՝ մի քանի հոգու
հետ էիր խոսում,

ասում եմ՝ բոլորը դու էիր, ասում ես… Էլ չէի լսում,
չիմացա՝ ինչ ասացիր։ Փողոցից ինչ-որ
հաչոցներ են հասնում,
երկնքում ուշացած կռունկներն են աղիողորմ
կանչում իրար,

եւ մի հավաքարար, որ
սովորականից վաղ էր արթնացել,
անցած գիշերվա չմարած շշուկները փորձում է
նոտավորել փողոցը մաքրող իր մաշված ավելով,
որի ծայրին
երկրագունդը պտտվում էր, ինչպես գնդակը՝
ձեռնաճուի մատի վրա։

ԼՐԱՑՈՒՄ
Ես ինձ ներում եմ, աղջիկներ, որ չկարողացա
գալ ձեզ մոտ՝ Բաբելոն,
բայց ձեզ, աղջիկներ,նրա համար, որ
ես չկարողացա գալ Բաբելոն, ներել չեմ կարողանում։

ԼՌՈՒԹՅԱՆ ԾԻՐԱՆԻ

Ես ոչ մեկի մոտ անկեղծ չեմ այնքան,
որքան մենակության հետ։ Քամին
բաղկացած է վայրի խնձորենու ծաղիկներից, իսկ
դու իմ աչքերից ես բաղկացած։
Լռությունը իմ շուրջ սկսում է դողալ,
ինչպես բարդենու տերեւները՝
մոտեցող արագիլի թեւերի տակ։

Կարոտը մոռացման սկիզբն է։ Հիշողությունս
հիմա զբաղվում է մանրանկարչությամբ, եւ սեն-
տիմենտալ աշնան վերջին վարդն
աննախանձելիորեն ինձ
վրա ծիծաղում է
փշերով, որոնք, անկասկած,
երկարակյաց են անհամեմատ, քան թերթիկները,
որովհետեւ այն, ինչ մեզ կապում-միացնում է,

ընդամենը
իմ ու քո միջեւ ընկած հեռավորությունն է։

Ծաղիկը, դիմադրելով իմ աչքերին, ապրում է իր
վերածնունդը։ Քարի
ծաղկումը, դա՝ ես եմ։ Իսկ Գեղարդն, ասում են,
ապագայի երեւակայությունն է։ Թեեւ երբեք ես
չեմ տաքանում այն կրակով, ուր իմ հուշերն են
եւ չեմ գնում այն ճանապարհով, որը
իմը չէ, ոտքերս
սովոր են միայն արգելքների։

Արեգակը նայում է թեք։ Եվ լույսի մեջ հրաժեշտի
տխրություն կա։ Ինքնակենտրոնացում։ Ես
զգում եմ վարսանդափոշու համը
շուրթերիս վրա՝
որպես գարնան շնչառություն։ Եվ ես մտնում եմ
Պարթենոն,
եւ ես գրկում եմ ծնկները Աթենաս Կույսի՝
Ֆիդիասի ծանր ժպիտների տակ, գիտեմ՝ հոգին
մութի եւ լույսի բեկորներ է։ Քո անզուսպ
գեղեցկությունն ինձ ակամա
դարձնում է բարբարոս։ Ներիր։

Սիրում եմ մեր անցած վայրերով քայլելը, այն
մի քիչ նման է քեզ հետ հանդիպելուն։ Երբ ես
հիշում եմ քեզ,
եւ քեզ մոտ
գալով՝ ես ավելի շուտ քեզ եմ վերադարձնում քեզ։
Ի՜նչ գեղեցիկ է հոշոտում եղնիկն առյուծին։ Եվ
իմ վերքից արյան տաք շիթերը

մարմանդ-մարմանդ ընկնում են
հողին՝ ինչպես ծիրանածաղկի կարմիր թերթիկներ։

Մի փետուր լողում է խորքերում, եւ ափը չի երեւում։

## ՈՒՇԱՑԱԾ ԹՌՒՂԹ՝ ՄԻ ԱՂՋԿԱ, ՈՐՆ ԻՆՁ ԱՅԼԵՎՍ ՉԻ ՀԻՇՈՒՄ

Անմեղությամբ նայիր ինձ՝ հեռվի՛ց-հեռու, որ
հանկարծ մեղավոր չերեւամ։
Ինձ մոտ չեմ։ Մենություն, ուր
բարձրանում է տատասկը վայրի։ Իսկ հույսը
ձգվում է ավելի, քան
իմ ճամփան է։ Ինձ թվում է, թե
արեւը սերվել է լեռան գագաթին բուսնող
ծաղիկներից եւ
իր մենությամբ լցնում է երկնքի
անափ անապատները։
Մինչեւ մի հավք չի կանգնում ինչ-որ թփի վրա
աղամամութին ու չի երգում, արեւը
դուրս չի գալիս։
Վաղը միշտ ուշ է լինում։ Ու չեմ
զարմանում, թե ինչպես է գինու բաժակը
հանկարծ սկսում ջերմանալ՝ քո տաք շուրթերին դեռեւս չհասած։

Թեեւ մեր բոլոր դաշտերը հիմա
ռազմադաշտեր են, սակայն
դա ամենեւին էլ չի նշանակում, թե
այնտեղ ծաղիկներ չեն բուսնում։

Ես մի օր կգամ։ Իսկ երբ
գրիչ եմ վերցնում, ուրեմն,
արդեն ճանապարհ եմ ընկել եւ կարող եմ այս աշխարհում

հասնել ամենուրեք,
բացի այնտեղից, ուր դու փնտրում ես ինձ։

Ի դեպ, քարտեզներին չեմ դիմում իմ ճանապարհին,
ոչ էլ նշաններին երթեւեկության,
բանաստեղծությունը դրանք
շպրտել է մի կողմ՝ վաղուց, շա՛տ վաղուց։ Ես
առաջնորդվում եմ հոգու
սլացքներով։

Ես հրաժարվում եմ քեզ մոտ բերող բոլոր
ճանապարհներից, որ բաց են արդեն,
ես ուզում եմ հայտնագործել մի նոր
ուղի, որով առաջինը ես եմ գալու դեպի քեզ։

Իմն են աշխարհի բոլոր չբացված ճանապարհները։ Ի՛նչ
լավ է, որ այլեւս ինձ չես հիշում, այդպես ավելի անմեղ ես։

## ՀԵՆՑ ԱՅՆՊԵՍ

Վայրկյանները գնացքի հեռացող պատուհաններ են, եւ
չենք հասցնում տեսնել այն, ինչ պիտի
երեւար։ Եվ մնում է միայն հիշեցնել,
հենց այնպես,
որ…
ներեցեք, վաղուց հոգնել եմ «համեցեք»-ից ու «անուշ
լինի»-ից, պարզապես ուզում եմ խոնարհվել մինչեւ գետին ու,
շուրթերս ջրի մեջ սուզած, մարել ծարավս։ Կողքի
թփերից վեր թռչող հավքի թեւահարումից օրորվող
ստվերների տակ։ Թաց խոտերի միջից
պլշած աչքերն ինձ հառած գորտի հայացքում։
Հենց այնպես,
որ…

առանց «բարեւի» ու «բարի գալուստ»-ի, մեկ-մեկ
ուզում եմ ափս
դնել Ուիթմենի ձեռքին, անմահության ի՛նչ հուշարձան, ու
զգալ, տեսնել, թե ինչպես է Ամազոնը հիմա ոչ թե արեւ- մուտքից արեւելք, այլ արդեն
բոլորովին հակառակ ուղղությամբ հորդում. խոսքը, սակայն, դեպի արեւն է հոսում
միշտ՝ ուր էլ ասվի։
Հենց այնպես,
որ…
երբ չեն կարողանում լռեցնել, սպանում են խոսքը, եւ
նա դառնում է հավերժորեն անլռելի (ես խուսափում եմ
այն վայրկյաններից, ուր Վարդանը ես չեմ)։
Հենց այնպես,
որ…
պատվանդանները սովորաբար ավելի բարձր են լինում, քան արձանները, որոնց նրանք
բարձրացնում են իրենց ուսերին, իրենցից բարձր։

Հենց այնպես,
որ…
եթե քար եմ անգամ, ապա չեմ ուզում լինել այն ավելորդ
մասերը, որոնց այնքա՛ն թեթեւությամբ Միքելանջելոն կտրում- հեռացնում է՝
ուզած քանդակը ստանալու համար։
Հենց այնպես,
որ…
բանտարկվածության առաջին նշանը, դա հենց ազատության
բարեբանումն է, իսկ լինել ժողովրդի հետ,
նշանակում է՝ ետ մնալ
ժողովրդից, ժողովրդի հետ նա է, ով ժողովրդից
առաջ է անցնում։
Հենց այնպես,
որ…

աշխարհում, միակ մարդը, որին հաջողվել է
Բայրոն լինել, դա հենց ինքը՝ Բայրոնն է, միայն թե՝
որոշ վերապահումներով։
Կարծում եք՝ հե՞շտ է, ասենք, խոտի համար՝ միլիարդավոր
խոտերի մեջ լինել այն միակը, որ
ինքն է։
Հենց այնպես,
որ…
Նոստրադամուսի կանխատեսումներում
Նապոլեոնն ավելի
ինքն էր, քան ինքը, եւ որքան նա
«Մարգարեությունները» գլխա-
տակին քնեց ու արթնացավ, միեւնույն է,
չկարողացավ շրջանցել
մարգարեի «կանխատեսած վախճանը», որ իրենն էր։
Ինքը չկարողացավ ինքը չլինել։
Հենց այնպես,
որ…

Մի «Հենց այնպես» եւս, առանց
«որ»-ի.
թե ուզում ես ձայնս հասանելի լինի քեզ, ավելի հեռացիր։

## ԱՆՍՈՎՈՐ ԱՐԵՎ

Երբ քեզ սիրում էի, եւ
անձրեւ էր գալիս, ես
հասկանում էի իմաստն անձրեւի,
ես գիտեի՝ ինչու է գալիս։

Երբ քեզ սիրում էի, եւ
ձյուն էր տեղում, ես
հասկանում էի իմաստը ձյունի,
ես գիտեի՝ ինչու է գալիս։

Երբ քեզ սիրում էի, եւ
արեւը սկսում էր ծագել, ես
հասկանում էի իմաստն արեւի,
ես գիտեի՝ ինչու է ծագում։

Իսկ հիմա, երբ հեռացել ես,
այլեւս չեմ հասկանում՝
ինչու է անձրեւ գալիս, կամ՝ ձյուն տեղում։
Նույնիսկ իմաստն արեւի՝ անհասկանալի է…

## ՃԱԽՐԱՆՔ

Քամին ձեռքը բացեց, գլխատված մանուշակ
կար ափի մեջ։
Արցախը ճանապարհ է ընկել, երբ
դեռ աշխարհում ճանապարհ չկար։

Բոլոր ուղիները՝ ամեն առավոտ,
անհայտից իջնում են արեւի հետ։ Եվ
ոչ մի բառ դղյակ չէ։ Բառը
տիեզերական
ազդակն է ապագայի։
Արցախ։
Ժամանակի միավորները գուցե սխալ են
սահմանված, գուցե
անցած եւ գալիք դարերը
մի վայրկյան են ընդամենը։

Ես հավաքում եմ աստղոտ իրիկունները
հուշերիս բաժակում՝
որպես դաշտային ցողի բյուրեղյա կաթիլներ,
նրանցով հյուսում երազանքի ապարանքներ,
որովհետեւ քարերը հոգնել են չթռչելուց։

Հիշողություններս հանձնել եմ աղբյուրին, ուր
լողանում են միայն վայրի թռչունները, եւ իմ
ընկերները, որ մնացել են պատերազմում։

Ես գիտեմ աղբյուր-խոսքեր, որ երբ հնչում են, իմ
երկրի մարդիկ ոտքի են կանգնում, ձայնակցում,
գլուխները՝ վեր,
հայացքով՝ դեպի արեւը, եւ այդ պահերին
որդիանում է լույսը նրանց բոցեղեն բիբերում։

Աստծո լույսի մեջ ամեն առավոտ հիմնն է Արցախի։

Որքան էլ՝ տարօրինակ, մեծ վշտի մեջ
կա մի ճախրանք,
որտեղ մարդ մաքուր է բացարձակապես։

Արեւի մի շող ծվարել է հավքի թափուր բնի մեջ։ Իսկ
ժայռուտներում
բարբարոս ծաղիկներն ուտում են քարերին։

## ԱՌԱՎՈՏՅԱՆ ԼՈՒՄՆՇԱՂ

Դու հեռվին ես նայում, ես
նայում եմ քեզ, եւ
սիրտս վայրի մորի է ուզում։

Արեւը քերծվել է լեռան կողին,
հյութը հոսում է կարմիր, եւ

քարը վաղորդայնի մեջ արշալույսի
ստանձնում է իր իսկական դերը։

Մի տղա դեղին զամբիկի վրա
սլանում է, չգիտե՝ թե ուր,
պարզապես վարգելն է գեղեցիկ։

Ես այսօր քեզ ասելու եմ, որ սիրում եմ։

## ՄՈԼԵԳԻՆ ՔՆՔՇՈՒԹՅՈՒՆ

Լորկային սպանեցին, որովհետեւ
նա բանաստեղծ էր ու մեծ,
Եսենինին սպանեցին, որովհետեւ
նա բանաստեղծ էր ու մեծ,
Չարենցին սպանեցին, որովհետեւ
նա բանաստեղծ էր ու մեծ։
Սեւակին սպանեցին, որովհետեւ…
Այսօր էլ շարունակում են սպանել
պոետներիս, որովհետեւ… Լորկան,
Չարենցը, Եսենինն ու Սեւակը
բանաստեղծներ են ու մեծ։

## ԱՌԱՆՑ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Ջուրը մերկություն է, հոգին՝ անդրադարձ,
ճանապարհները՝ հեռվի հեռացում,
արձանները ճարահատ ինքնախաբեություն են,
հորիզոնները՝ երազկոտ աչքերի պատրանք,
ծաղիկները՝ երկնքի եւ երկրի մերձեցում։

Հայացքը գոյավորումն է անտեսանելիի,
հովիտը՝ միակ վայրը, ուր կարող է

փափուկ վայրէջք կատարել Արարատը։ Լեռը
մարդու վերընթացն է դեպի իրեն,
հույսը, ի վերջո, մեկնարկ է լույսի։

Տարբեր եզրերով գագաթ հասած զույգ
մրջյունների հանդիպումը՝ խոտի ծայրին,
սիրո մոտավոր բացատրություն է, իսկ
խավարը նույնն է, ինչ օրվա աչք փակելը
մարդու մեղսագործությունների առաջ։

Ժամանակը մոխիր է՝ քամուն հակադարձ։ Եթե ես
նայում եմ քարին ու քարը չի տեսնում ինձ,
ուրեմն՝ ես եւս չեմ տեսնում նրան։ Ավելին։ Քարն
այն քարը չէ, որին նայում եմ։ Չեղյալ հայտարարեք
պատերազմը, թող զոհյալները վերադառնան։

Բաժանումը նշագրում է սրտի առիթմիան, լացը
հիշողություն է՝ անկոռահելի անակնկալներով,
անտուն մարդու կողքի վրա շրջվելը՝ քայքայված
քուրսու վրա, վերջնական ինքնալքում է՝
բարձիթող այգու կիսաքանդ հոլիկում։

Տխրությունը բացարձակ ինքնուրույնություն է, ուր
մարդ հասնում է այն կետին, որտեղ ինքը եզակի է։ Իսկ
ծառը, որից կառչում եմ, որ քամին ինձ չտանի, ես
փնտրում եմ միայն իմ մեջ, քանզի իմ մենությունն է, որ
չափավորում է մոլորակների տիեզերական ընթացքը։

01.01.07թ.